

ՂԱՐԱԴԱՂԻ ՄԻՋԵՆԹԱԲԱՐԲԱՌԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Հ. ԲԱՂՈՄՅԱՆ

Պատմական Հայաստանի Փայտակարան նահանգը սահմանային էր և աչքի էր ընկնում նաև խոսակցական-բարբառային ինքնատիպությամբ: 1827—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով տեղի ունեցավ առաջին զանգվածային տեղահանությունը, և գաղթող հայերը հանգրվանեցին Թավրիզում (կիլավա թաղ) ու նրա մերձակա Մուժումբար, Ալշամուլք, Սոհուլ գյուղերում: Ամենամեծ գաղթը տեղի ունեցավ 1840-ին, և գաղթականները բնակություն հաստատեցին Արցախում (Աղբուլսղ, Բինյաթլու, Խրմանջուղ, Ծակուռի, Հադրութ, Հյուքյուրթաղ, Ղուշլիար, Մամեդաձոր, Մելիքջանլու, Նորաշեն, Նոր Առաքյուլ, Շաղախ, Զիլան, Զրակուս, Տեղ, Քարագլուխ և այլ գյուղերում), Շամախիի շրջանի Զարխո (այժմ՝ Շիրվանզադե), Քերքենջ գյուղերում, Գորիսի, Զանգեզուրի, Արտաշատի, Կոտայքի, էջմիածնի և այլ շրջաններում:

Հաջորդ գաղթերի ժամանակ դարադադրի հայերը տեղակայվում են Թավրիզ, Թեհրան, Բաքու քաղաքներում և այլուր: Մասնավորապես հայրենադարձությունը եղավ 1946 թ., երբ իսպառ դատարկվեցին Աղաղան, Աշրափ, Բերդ, Լումա, Խանազադ, Ղասումաշեն, Ղուլաղի, Նեփեշտ, Սալդու, Սղըն, Ուրգութան, Քարագլուխ և այլ գյուղերը:

Եթե XIX դարի վերջին Ղարադաղում հիշատակվում են շուրջ 70 հայաբնակ գյուղեր, ապա 1905-ին՝ 29, 1946-ին՝ 21. այժմ Ղարադաղցիների վերջին բեկորները հանգրվանում են Սովետական Հայաստանում:

Փայտակարան-Ղարադաղի տարածքում խոսվել է երեք ենթաբարբառային խոսվածքներով. 1. Ղարադաղի (Հասանավ գավառակի Լումա, Նորաշեն և այլ գյուղերում, Մեշափարա գավառակի Ողան, Վերին Նեփեշտ և այլ գյուղերում, Դզմառ գավառակի Խանազադ, Ղուլաղի, Մարդու և այլ գյուղերում), 2. Դզմառի (Ղշլաղ, Ուրգութա և այլ գյուղերում) և 3. Քելվանի (Արմագուլ, Աշրափ, Գինդիման, Ղասումաշեն, Սղըն, Սուրուն, Սևավրդ, Վերին Ասրան, Վինան, Քարագլուխ գյուղերում):

Ձնայած բաղմահատկանիշ դասակարգումը տեղ չի թողնում այսպես կոչված թափառող բարբառների, միջբարբառների, ենթաբարբառների ու միջենթաբարբառների համար, բայց և այնպես դրանք դեռ կան ու փաստարկելու կարիք ունեն: Դրանցից մեկն էլ Ղարադաղ-Շաղախ-Խանազադ, Շաղախ-Դզմառ-Քելվան կոչվող խոսվածքախմբերն են: Բաղմահատկանիշ դասակարգմամբ սրանք անցնում են ծայր հյուսիս-արևելյան (Ղարադաղ-Շամախիի) միջբարբառախմբին և բնութագրվում որպես այդ խմբակցության ենթաբարբառ:

Հ. Աճառյանը սկզբնապես Ղարադաղի բարբառի «զուտ ենթաբարբառներից» մեկը համարել է Ղարադաղի բարբառը, որը Ղազախի, Գանձակի, Գորիսի քույր խոսվածքների հետ միասին ներկայացնում է «քիչ կամ շատ տարբերություններ»² ինչպես մայր բարբառի, այնպես էլ միմյանց նկատմամբ: Մական հետազոտում հեղինակը ճշտում է իր կարծիքը և գտնում, որ Հադրութի, Շաղախի հետ միասին Ղարադաղի խոսվածքախումբը ներկայացնում է

1 Գ. Զահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն. Երևան, 1972, էջ 136:

2 Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն. Վաղարշապատ, 1911, էջ 62:

Ղարաբաղի ենթաբարբառային մակարդակը, քանի որ Ղարաբաղի ենթաբարբառը շեղվում է և «սահմանականի կաղմության կողմից ել, ելիս ճյուղի տակ է ընկնում» ու միանում Մեղրիի բարբառին²։ Կոնկրետացնելով իր խոսքը՝ Հ. Աճառյանը վկայաբերում է հինգ հատկանիշ և հաստատում, որ Ղարաբաղի «ենթաբարբառը շատ մոտիկ է Ղարաբաղի բարբառին. շեշտի տեղափոխությունը և անոր նախադաս ձայնավորներու անկումը. $n > o/\delta$, ու $> ու/ու$ ձայնափոխությունները. գլխաբարի և հանգի նր-ի վերածումը, անցյալ դերբալի ալ վերջավորությունը... Ղարաբաղի բարբառը չգիտե միայն հին հայերենի թրթռուն ձայները խուլի վերածելը և դանոնք իրենց նախկին աստիճանով կպահանջ³։ Ծավալելով հատկանիշների քանակը՝ Հ. Աճառյանը ականջատրեն հանգում է այն եղրակացության, որ ս-ական խոսվածքախումբը կամ ենթաբարբառը բնականաբար կարող է անցնել լս/ուս-ական բարբառին։

Ի մոտո ծանոթանալով Ղարաբաղի տարածքի խոսվածքներին՝ Ա. Ղարբեյանը առանձնացնում է ենթաբարբառների երեք խումբ. 1. Հասանավ-հաւանգսի (հանազա՛, Ղուլաղի, Շավի, Նորաշեն, Օղան, Լումա, Ամրատուլ, Շրվան, Մամտարան, Մաքիտ, Սզկիթ գյուղերի, ինչպես նաև Մեշափարայի, Քլալայի, Գիրմնավի, Նեփիշտի, Վղանի, Սվավեղի խոսվածքները), 2. Դրգ-մառի (Ղշլաղ, Ուրգութա, Աղսղան, Սադրա գյուղերի և Մինջևանի, Վինանի, Վարդանուրի, Քարագլխի, Աղաղուլի խոսվածքները), 3. Քեյվանի (Քեյվան, Սղեն, Բարդ, Ղասաբ, Խուղաֆերին գյուղերի խոսվածքախումբը)։ Այնուհետև հեղինակը շարունակում է. Հասանավ-հաւանգա՛հի «շրջանի խոսվածքը կոչում ենք Ղարաբաղի բարբառ, քանի որ նրա հատկանիշները... լիակատար չափով համընկնում են ամբողջ ճյուղի հատկանիշներին։ Այդ պատճառով ուղղում ենք նախորդ ուսումնասիրության ժամանակ տեղի ունեցած սխալը, քանի որ Ղարաբաղի բարբառ կոչել ենք Շաղախի բարբառը»։ «Իզմարի շրջանի գյուղերի խոսվածքները հիմնական տարբերություն ունեն Ղարաբաղի բարբառից և հանդիսանում են անցման մի օղակ Ղարաբաղի բարբառից դեպի Մեղրու բարբառը։ Այդ խոսվածքները միասին կոչում ենք Դզմարի բարբառ»։ «Մյուս շրջաններում խոսվածքները խառն են. որոշ գյուղեր մոտենում են Ղարաբաղի բարբառին, որոշ գյուղեր Դզմարի բարբառին, սակայն մնացած երեք շրջանների (հինգ շրջաններից—Ռ. Բ.) գյուղերի խոսվածքները շատ ավելի նման են Շաղախի բարբառին... Այս երրորդ (Քեյվանի—Ռ. Բ.) տեսակի բարբառը, որ առաջներում կոչել էինք Շաղախի բարբառ, նկատի ունենալով, որ Քեյվանի շրջանի գյուղերի խոսվածքը բնորոշ շատ գծեր ունի Շաղախին նման և ներկայացնում է ավելի մեծ տարբերություններ «ս» ճյուղի մյուս բարբառներից, քան Շաղախի բարբառը»⁴։

Վերջապես, հեղինակը Ղարաբաղի բարբառը համարում է մայր բարբառ, իսկ մյուսները՝ նրա ճյուղավորումները։

Այսպիսով՝ 1. «Ղարաբաղի ենթաբարբառը ընդարձակ տարածություն ունի. կբռնե Ատրպատականի հյուսիսային կողմը՝ Ղարաբաղի մեծ ու հայաշատ գավառը, որ հին Փայտակարանը կհամարվի»⁵. այդպիսի տարածքում նա բնականաբար պիտի ունենար ենթաբարբառներ կամ ճյուղավորումներ էլ.

2. Գրավելով միջին դիրք մերձարաքսյան ու Արցախական կամ ս-ական և ուս-ական եռաստիճան անտեղաշարժ և երկաստիճան ձայնեղադուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառախմբերի նկատմամբ⁷, այս բարբառախումբը ցուցահանում է հետևյալ ինքնատիպ հատկանիշները.

1. Հնչյունական-հնչյունախոսական.

ա) Ձայնավորների համակարգով համարյա նույն կամ շատ նման է Ղա-

² Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 2-րդ մաս, Երևան, 1952, էջ 360—361։

⁴ Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, էջ 71։

⁵ Ա. Ղարբեյան. Հայ բարբառագիտություն. Երևան, 1953, էջ 281—282։

⁶ Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, էջ 70։

⁷ Հմմտ. Ա. Ղարբեյան. նշվ. ուղիւ, էջ 292։

րաբաղի բարբառին. կան օ, օ, ու քմային ձայնավորներ, միջին շարքի վերին րարծրացման ը (ոտն > լըննը), սուղ հնչման ք (կի՛պիտիլ՝ կապտել՝ ճի՛-
րէք՝ ճրագ), երկբարբառային քե, քօ ձայնավորներ.

բ) Ձայնեղ պայթականների շարքով երկփեղկվում է. խոսվածքների Քեյ-
վանի խումբը հետևում է Ղարաբաղի բարբառին, այսինքն՝ ներկայացնում է
երկաստիճան ձայնեղադուրկ համակարգ, իսկ Ղարաղաղ-Դղմառի խոսվածքա-
խմբերը՝ Մեղրու բարբառին, այսինքն՝ ունեն եռաստիճան անտեղաշարժ բա-
ղաձայնակուն համակարգ.

գ) Լնդհանուր առմամբ այստեղ գտնում ենք 46 հնչյուն, որից 13 ձայնա-
վոր՝ ա, օ, օ, ու, ու, ք, ք, ի՛, քօ, քե, ե, ի և 33 բաղաձայն՝ բ, գ, գ, ճ, ջ,
չ, պ, ա, կ, ծ, ն, փ, ք, ք, ց, չ, ք՛, կ՛, ք՛, վ, զ, ժ, դ, (Ֆ), ս, շ, խ, հ, լ, մ,
ն, ր, ո, յ. երկբարբառ չկա: Ֆ հանդիպում է միայն դեֆ դափ—աղբբ. ԸՅՓ
«թմբուկ» բառում:

II. Հնչյունափոխակաճ.

ա) Նախաշեշտ վանկի բոլոր ձայնավորները սղվում դառնում են ռ/ի՛ կամ
էլ իսպառ ջնջվում են, եթե բառասկզբի բաց վանկում են:

բ) Ետին շարքի ա, օ, ու ձայնավորները հաճախ քմայնանում են, բայց
ոչ հետևողականորեն. այդ փոփոխությունը տեղի է ունենում ավելի շատ ձայ-
նեղ (խլացած) պայթականներից և կիսաշփականներից հետո:

3. Ա ձայնավորը նախաշեշտ վանկում սղվում դառնում է ք, իսկ եթե
բառասկզբի բաց վանկում է և դ-ից առաջ, ապա իսպառ ջնջվում է. աղա-
տել > ըզադիլ, աշխատել > ըշխադէլ, արածել > ըրածիլ, առաւօտ > ըռաւօա,
կարկատանք > կրրկատսն, հարեան > հրէվան, ճախարակ > ճրխարակ, տա-
րեկան > տրէկան, աղաչանք > դաչանք, աղանձել > դանձիլ, աղանի > դո-
նէք՛:

Միավանկ թե բազմավանկ բառերի շեշտված վանկում ա-ն դառնում է է,
մանավանդ բառակազմի ձայնեղ (խլացած) բաղաձայնից հետո. բան > բէն/
պէն, բաց > բէց/պէց, դառն > դէռնը/տէռնը, դաղձն > դէսնը/տէսնը, գդակ >
գիթէգ/քըթէկ, ժամ > ժէմ, լաց > լէց, բաժին > բէժին/պէժին, բամբակ >
բէմբակ/պէմբակ, բարակ > բէրակ/պէրակ, դանակ > դէնակ/տէնակ, դատիկ >
դէտէգ/գէտէկ, դարթուն > գէրթուն. լափել > լէփիլ:

Այս փոփոխությունը տեղի է ունենում նաև շեշտահաջորդ վանկում. ա-
մալ > համէնչ, թառանչ > թտուէնչ, կանաչ > կանէնչ, ճանաչ > ճանէնչ, կարագ
> կարէգ/կարէք, հանդարտ > հանդէրտ, մարագ > մարէգ/մարէք, ուրագ > հօ-
րէգ/հօրէք, օրհնանք > օրհնէնք/օխնէնք:

Ա-ն դառնում է օ՛ առանց որոշակի կանոնի. այսպես՝

ա) Ձայնեղ (խլացած) բաղաձայնից հետո. բազմել > բօզմիլ/պօզմիլ,
դաս > դօս/տօս, դարսել > դօրսիլ/տօրսիլ, արդար > օրթար, ուրբաթ > օր-
փթթ, բանջար > բէնջար/պէնջար, գազաթ > գէգաթ, գանգատ > գէնգատ/կէն-
գատ, արձակ > հարգակ, արժան > իժան.

բ) Այլ բաղաձայններից առաջ կամ հետո. ադի > հօգի/հօգի, ագբն >
օսպ, ամպ > օմբ, արիւն > օրուն, ալիւր > օլուր, անալի > ինանլի, արև
օրըվ, արժել > օժիլ, ափ > օփ, ականջ > օնջուկ, բերան > բէրան/պէրան,
թագ > թօք, խաբել > խաբել/խափէլ, խանձել > խանձէլ, ծալ > ծալ, ծիրան >
ծէրան, հալել > հօլէլ, հանգիստ > հանգիստ, հաշտ > հօշտ, ճանճ > ճանջ,
մեխակ > մըլաք/մըլաք, շարական > շարագուն/շարակուն, վարձք > վարսկ,
տալ > տալ և այլն:

Ա > ի՛ փոփոխությունը տեղի է ունենում թեթեւ ձայնավորներով կազմված
բառերի նախաշեշտ վանկում. անալի > ի՛նանլի, արեգակն > ի՛րիքնակ, ալե-

վոր>հիլիվոր, ածելի>իծիլի, ալաժահրի>իլիժհի, յարձակիլ>հիլ-
դակիլ, քամելի>քիմիլի, բանալի>բինալի/պինալի, բարակել>բի-
րակիլ/պիրակիլ, բարձրանալ>բիցրանալ/պիցրանալ, բաժանել>բիժոնիլ/
պիժոնիլ, պատահելիս>պիտիհիլիս:

Մասնավոր փոփոխություններ ա-ն դառնում է օ/օ, ու/ու, ը, է, ա>օ/օ—
ամէն>օմէն, առաջ>օռէն, բաժանել>բուժոնիլ/պուժոնիլ, քաղց>քօխց,
գալ>գօլ/կօլ, գառն>գօռնը, կժօնը, գարի>գօրէ/կժօրէ. ա>ու/ու—առանց>
ուռուց, առնէտ>առնատ, ալեոր>հուլուլուր/հուլուլուր, արիւնել>ուռնիլ,
ականջ>անջուկ, շարական>շարագուն/շարակուն.

Մասանի>մուտանի, սատանայ>սուտանա բառերում ա>ու փոփո-
խությունն առերևույթ է. դրանք կաղմված են մուտ, սուտ արմատա-
կան ձևերից: ա>ը/ը—համար>մահար>մըհար, մահակ>մըհակ, ամառն>
ամըռնը, անդամ>անդըմնը, արջառ>աջըռնը, բանկն>պընդըլ, փայլաղն>
փաժըղնը: ա>լ—աչել>աշել>իշէլ, յէշէլ, դրամ>գիրէմ/տիրէմ, ճրագ>
ճիրէգ/ճիրէթ. ա>ի—արժան>իժան, բահ<բիհ/պիհ, աւելի>իվիլ. ա>—
ավետարան>վրտարան, աւելուկ>վիլուկ, աքացի>քացէ:

4. Ռ (օ) ձայնավորը բառասկզբում ընդհանուր հայերենի օրենքով շրթ-
նայնանում է և դառնում վօ, վըօ, վւ/վըւ—ոսպ>վօսպ/վըսպ/վըօսպ, որձ>
վօրձ/վըրց, որս>վօրս/վըրս/վըօրս, ոտն>վօննը/վըտ/վըննը, որբ>վըրփ/
վըօրփ, որդն>վօրհնը, ոստ>վըօստ, ոսկր>վըօսկը/վօսկըր. ոչխար>վօխ-
չար, ողջուն>վօիւնում, ոսկի>վօսկի/վըօսկէ, ռթիս>վըրթիս, որգի>վըրթի,
վըօրթէ, ողողել>վըղողիլ, ոտնահարել>վըննըհարիլ, որբեայրի>վըրփը-
վերի:

Բառասկզբում ո>վէ փոփոխություններ են՝ ոչ>վէչ, ոչինչ>վէչինչ, ոքի
>վէչիլ:

Բառասկզբի հո դառնում է վօ/վը. հող>վօղ/վըղ/վըօղ, հոր>վօր/վըր
հոտ>վօտ/վըտ, հորթ>վօրթ:

Ձայնեղ (խլացած) պայթականներից, ինչպես նաև խուլներից հետո ո-ն
քմայնանում է. ալսպիս՝ գող>գժօղ/կժօղ, գօտի>գոտի>գօխտի/կժօխտէ,
գործ>գօրձ/կօրձ, գորտնուկ>գօռհնուկ/կժօռհնուկ, դոխ>գօխ/տօխ, ձող>ձօղ,
ծօղ, խնձոր>խընձօր, ձոր>ձօր/ծօր, ջուկ>ջօկ/ճօկ, ջուրի>ջօրէ/ճօրէ. չոր>
չօր, չորք>չօրթ, շուր>շիլօր և այլն:

Շեշտված վանկում սլահվում է անփոփոխ ո (օ). թող>թօղ, խող>խօղ,
խորթ>խօրթ, կող>կօլ, կոճակ>կօճակ, կոտեմն>կօտէմնը, հողի>հօքի,
ցորեան>ցօրէն, փող>փօղ, փոր>փօր:

Անշեշտ վերջնավանկում ո-ն դառնում է ու. ախոռ>ախուռ, ափսոս>
ափսուս, խարտոց>խարտուց, խոշոր>խոշուր>խուշուր, կտոր>կուտուր,
կորկոտ>կուրկուտ, բոժոժ>բուժոժ/պուժոժ, եղտոտ «կեղտոտ»>յէխտուտ,
ձգնաւոր>ճըքնավուր, մեղաւոր>մըղավուր, մուրը>մուլուլ, շորոր>շու-
րուր, որոճ>արուճ, պարոն>պարուն, տորոն>տարուն:

Այդպես և շեշտված փակ թե բաց վանկում. գող>գուղ/կուղ, գող>
գու:գ/կուգ, գոմ>գում/կում, գոռ>գուռ/կուռ, գոմէշ>գումաշ/կումաշ, գոռալ>
գուռալ/կումալ, բուր>բում/ււր, ծոպ>ծապ, ծոմ>ծում, մոմ>մում, թոք>
թոք. խոփ>խուփ, փուկ>փուկ. ուլ>հուլ, ոչ>վաչ, ուլոր>հուլօր/հուլօր,
ոռնալ>ուռնիլ, ողողել>տղօղիլ, որոտալ>ուրուտալ, ոջիլ>հուջիլ/հուջիլ:

Նախաշեշտ վանկի ո-ն սովորաբար դառնում է ր. հովանալ>հըվանալ,
լողանալ>լըղանալ:

Կրկնակի շրթնայնացումից խուսափելու համար -ուլ դառնում է -ալ-

ծով>ծավ, կով>կավ, հով>հավ, խով>խավ, խորովել>խորավել, քա-
րով>քարավ:

Մասնավոր փոփոխություններ ունի դառնում է է. բողկ>բէխկ/պէխկ, բո-
կ(իկ)>տէպէգ՝, գոքանչ>գէմքուչ, խնոցի>խընէցէ:

Ծ. Ու ձայնավորը սովորաբար դառնում է օ, այսպես՝

ա) Բառասկզբի շեշտված վանկում. ութ>օթ, ուխտ>օխտ, ուղտ>օղտ,
ուս>օս, ուռ>հօռ, ուրախ>օրախ, ուրիշ>օրիշ/օրէշ, ունեմ>օնիմ, ու-
ղել>օղիլ, ուտել>օտիլ, ուռի>հօռէ:

բ) Բառամիջում շեշտված վանկում. թութ>թօթ, թուզ>թօզ, թուղթ>
թօխտ, խունկ>խօնգ, ծուռ>ծօռ, ծունկն>ծօյնը, կուծ>կօծ, կուշտ>կօշտ,
կուտ>կօտ, մուկն>մօկնը, մուխ>մօխ, նուռն>նօռնը, շուն>շօն, սուտ>
սօտ, տուն>տօն, պտուղ>պրտօղ, հունցել>հօնցիլ, քուռակ>քօռակ, կը-
նունք>կընօնք, զեղնուց>զըղնօց/տըղնօց:

գ) Բառավերջի բաց վանկում. թթու>թըթօ, կծու>կըծօ, մոռ>մըռօ,
կամ էլ պահվում է անփոփոխ. դու>դա/տու, կատու>կատու, հերու>հէրու,
ճրագու>ճըրագու, չու>չու, ձու>ձու/ծու, խաշու>խաշու:

Ձայնեղ (խլացած) պայթականներից հետո ունի հաճախ քմայնանում է.
բուրդ>բուրթ/պուրթ, դուրս>դուս/տուս, գուշ>գուշ/կուշ, դաթան>գաթան/
կաթան, ձուկն>ձուկնը/ծուկնը, ջուր>ջուր/ձուր, գուր>գուր, լուծ>լուծ, լե-
զու>լուզի, և այլն. հմմտ. գարթուն>գէրթուն, թիկունք>թէգ՝ունք, սիրուն>
սօրուն, քորայ>քորա:

Բառասկզբի բաց վանկում ունի ջնջվում է, օրինակ՝ ուղարկել>զարկիլ,
ուղղորդ>ղօրթ, ուղուկ>հըղօք, իսկ բառավերջի փակ վանկում երբեմն դառ-
նում է ը, օրինակ՝ անուն>անըմ, ափ-բուռ>հափըռ, փետուր-տեփուր>
թէփըռ, երբեմն էլ պահվում է անփոփոխ, օրինակ՝ ուսումն>ուսում/ուսում-
նը, ուղեղ>հուղօղ, ուռցյց>ուռուց, կարկուտ>կարկուտ, կամուրջ>կար-
մունջ, փշուր>փուշուր, օգուտ>օքութ:

Ունի հաճախ դառնում է ե. եղունդ>լէղէնգ՝, ուլունք>հէլունք, գմուռս>
ղմբէնը, մանուշակ>մընէշակ, -ութիւն>-էթուն՝ շատութիւն>շրտէթուն,
եղբայրութիւն>ըխարէթուն:

Ը. Ա ձայնավորը սովորաբար պահվում է անփոփոխ. ընկեր>հընգէր,
ընտրել>հընդրէլ, սկսել>ըսկըսէլ, ստեղծանել>ըստէխծիլ, զնդան>զըն-
դան, գրկել>զըրկիլ, դմակ>զըմակ/տըմակ, խմոր>խըմօր, թրթնջուկ>
թըրթէնջուկ, թանձր>թանձըր, ծանր>ծանդըր, ծունր>ծօնդըր, մանր>ման-
դըր:

Թեթև ձայնավորներով կազմված շեշտակիր վանկի ազդեցությամբ նա-
խորդող վանկի (վանկերի) ը-ն դառնում է ի՝. բլիթ>բի՝լիթ/պի՝լիթ, բշտել>
բի՝շտիլ/փի՝շտիլ, բրինձ>բի՝րինձ/պի՝րինձ, գզել>գի՝զիլ/կի՝զիլ, ձգել>
գծել>գի՝ծիլ/քի՝ցիլ, ճրագ>ճի՝րէգ/ճի՝րէք՝, մըջիմն>մի՝րջիմնը/մի՝ր-
ջիմնը, ջրել>ջի՝րիլ/ճի՝րէլ: Նույնպես շեշտված վանկի ձայնավորի ազդե-
ցությամբ նախաշեշտ կամ ետնաշեշտ վանկի ը-ն դառնում է ու/ու, օ. այս-
պես՝ բարձր>բէցուր/պէցուր, բժոժ>բուժուժ, գրող>գուրօղ, կտուր>կու-
տուր, փշուր>փուշուր, մշակ>մուշակ, ախր>աստր>ուստուր, ախր>ուռն-
դուր, գլուխ>գուլծի/կուլծի, գալ>քաթօլ, գրուց>գուրուց, ճնճուղ>ճոն-
ջուղ, կրեալ>կօրէ, կրծել>կօրծիլ, կրտել>կօտիլ, ճմլել>ճմուլ>ճըմօուլ:

Գրաբար բառավերջում ը շունք, իսկ այստեղ, ինչպես ուրիշ շատ տե-
ղերում, ստեղծվել են ը-աճանգ ձևեր՝ երկու ճանապարհով. ա) ը հոդ ստեղ-
ծելով. քար-ը, տուն-տօն-ը, բ) գրաբարի վերջնաճանգ ը-ն գաղտնավանկ ը-ի
հետ դրափոխելով. ակն>ակնը, ամառն>ամըռնը, թոռն>թօռնը, կամն>

կամներ, աղեղն > հանըղներ, հտրսն > հառհներ, մատն > մանծը, մուկն > մոկներ, ոտն > մոններ:

7. Ե-ն շեշտված վանկում մնում է անփոփոխ կամ դառնում է յէ, հէ, յը, ճի, ի, ըէ, ը, առանց որոշակի կանոնի. այսպես՝

ե > յէ — եզն > յէզներ, երգ > յէրք, եղն > յէղներ՝ եղնիկ, երկիր > յէրգիր, եղունգն > յէղէնգ, եղեամն > յէղէմներ, երկայն > յէրկան, երեսուն > յըռէսուն. ե > հէ — եղի > հէղէ, եռ > հըռէ, երի > հէրէ, երինջ > հէրէնջ.

ե > ի — ես > իս, եփ > իփ, եփել > իփել, երբ > հիբ, երեք > իրք, երես > իրքս, հեշտ > հիշտ, թել > թիլ, շեղ > շիլ, շեշ > շիշ, ցել > ցիլ, հրեշտակ > հրիշտակ.

ե > ը, ըէ. — ծանրախոսություն ժամանակ, շեշտված վանկում, որոշ բաղաձայններից հետո կամ առաջ. մեծ > մըծ/մըէծ, մեղ > մըղ/մըէղ, մեղր > մըրէղըր, մեղք > մըրէրկ, մեք > մըրէնք, մըք, նեղ > նըէղ, ներկ > նըրէրկ, նեւ > նըւտ, թեղ > թըրէղ, թե > թըրէվ, թեփ > թըրէփ, թեր > թըրէր, ծեղ > ծըրէղ, ծերպ > ծըրէրպ, տեղ > տըրէղ, տեղ > տըրէղ, տես > տըրէս, ճեղք > ճըրէրկ, սեպ > սըրէպ, սեռն > սըրէներ, սերմն > սըրէմ, կերպ > կըրէպ, կեղ > կըրէղ, կեմն > կըրէմ/կըրէմներ, կեռ > կըրէռ, հերթ > հըրէթ, եռ > հըռէռ, ցեխ > ցըրէխ, քերծ > քըրէծ, քեզ > քըրէզ, հեռի > հըրէռի, թեղի > թըրէղէ, փետուր > թըրէփուր, մեղալ > մըրէղալ, մեկնիլ > մըրէկնիլ, սերտել > սըրէտիլ, փեսայ > փըրէսէ:

Բայց կարող է պահպանվել նաև անփոփոխ, այսպես.

զետ > գէտ/կէտ, ղե > ղէվ, ղեղ > ղէղ/տէղ, ջերմն > ջէրմ/ճէրմ, վերջ > վէրջ/վէրի, բերան > բէրան/պէրան, բերել > բէրէլ/պէրէլ ղեղին > ղէ-ռին/ղէղէն/տէղին/տէղէն, գերան > գէրան/կէրան, լեղակ > լէղակ, ինք > խէրք, խեղդել > խէղդէլ/խէլտել, լիսեն > լիսէներ, հերու > հէրու, հեռու > հէռու, համբերել > համբէրիլ և այլն:

Նախաշեշտ վանկում սովորաբար դառնում է ը. երեսալ > ըրախա, եղբայրություն > ըխսրէթուն, երեկոյ > ըրակու, մեծանալ > մըծանալ, սերկեիլ > սըրկէվիլ. այդպես և շեշտահաջորդ փակ վանկում. ասեղ > ասըղ, արև > արըվ, աներ > հանըր, աղեղն > աըղըներ, երես > իրքս, երեք > իրք, թեթև > թիթըվ, մորեխ > մօրքիս, շերեփ > շիրքիփ, սիսեն > սիսըներ, սիպեղ > սիբըղներ, տերև > տիրըվ, տաշեղ > տաշըղ, ցերեկ > ցիրըկ: Այդպես և շեշտուոր վանկում. ղեղնել > ղըղնիլ/տըղնիլ, ղեղնուց > ղըղնուց/տըղնուց, երանգ > ըռանգ, երևալ > ըրվալ, լեղի > լըղէ, մեխակ > մըխագ:

Բառակազմի ի-ի առնմանությունը ե-ն դառնում է ի, ա-ի ազդեցությամբ՝ ա, սուղ վանկում՝ ի. այսպես՝

ե > ի — աելի > ի՛վիլի, հալելի > հի՛լիլի, քերել > քիրիլ, ձելի > ձի՛վիլ/ծի՛վիլ, շերեփ > շիրիփ, սերկեիլ > սըրկիվիլ, եկեղեցի > գի՛ղէցէ, գերեզման > գի՛րէզման, աելուրդ > ի՛վիլնօրթ, թեթևանալ > թի՛թվանիլ, քամելի > քի՛միլի, ածելի > ծիլի.

ե > ա — եղինջ > աղինջ, երկանք > արկանք, երկաթ > արկաթ, երաշտ > արաշտ, երազ > արազ, կենալ > կանալ, մենակ > մանակ: Առանձին ևն մընում մէջ > մաշ և տենդ > տանդ:

ե > ու — երեկուլ > ուրուգու, լեղու > լուղի/լուգու, երդ > հուրդ:

8. Ի ձայնավորը սովորաբար դառնում է է. այսպես՝

ա) Շեշտված բաց թե փակ վանկերում. թի > թէ, լինդ > լէնդ, ծիտ > ծէտ, հինգ > հէնգ, մի > մէն, շիթ > շէթ, վիզ > վէզ, ցից > ցէց, նիգ > լէնգ, նինջ > լէնջ, կծիկ > կըծէկ/կըծէգ, կուլ > կըռէվ, տափպ > տըտէպ, հիմն > հէմն, կին > կնիկ > կընէկ/կընէգ.

բ) Շեշտահաջորդ բաց թե փակ վանկերում. աքացը > քացէ, գարի > գօրէ, գօտի > գօիտէ, եկեղեցի > գի՛ղէցէ, եղի > հէղէ, թեղի > թէղէ, խնա-մի > խընամէ, խնոցի > խընէցէ, մատանի > մուտանէ, մորի > մօրէ, մարթի >

մօրթէ, օրրի>չօրէ/նօրէ, ոսկի>վճակէ, տարի>տարէ, ուսի>հօռէ, քամի>քամէ. աղանի(կ)>դօնէ՞՞, դեղին>դէղէն/տէղէն, երինջ>հէրէնջ, ծաղիկ>ծաղէկ/ծաղէ՞, կաղին>կաղէն, կացին>կացէն, կատիկ>կատէկ/կատէ՞, կալոսիք>կէսէնք, ծոթորին>ծըթօրէն, կոծիկ>կօծէկ/կօծէ՞, հարսանիք>հըրսանէ՞ք, համիչ>համէնչ, ուրիշ>օրէշ.

Այդպէս և բուսանունների ի/ենի, տեղացիութուն ցույց տվող ցի/ացի/եցի ածանցներում. բոխի>բէխէ/պէխէ, կաղնի>կաղնէ և այլն:

Սակայն երբեմն պահպանվում է նաև անփոփոխ. ինը>իննը, ինչ>հինչ, ինքն>ինքը, իննեքեան>իննէքքան, ինձ>ինձ, իմաստուն>իմաստուն, բարի>բարի/պարի, պինի>գինի/կինի, դեպի>դիբի, ձի>ձի/ծի, լի>լիքը, մի>մին, հոգի>հօքի, կաշի>կաշի, ծանալի>բինալի/պինալի, վայրենի>վի՛րինի, հայելի>հլիլի, բաժին>բաժին/պաժին, գին>գին/կին, դինձ>դինձ/կինձ, գիր>գիր/կիր, չիր>չիր.

Ծանրախոսության ժամանակ ի-ն արտասանվում է ը, ըե. ծիծ>ծըծ/ծըէծ, ծին>ծըէն, ծիտ>ծըէտ, ծիրտ>ծըէտո, միս>մըս/մըէս, միտք>մըտք/մըսկ/մըէտք/մըէտի, լիրք>լըէոփ, տիգ>տըէգ, պինդ>պըէնդ/պընդ, սինձ>սըէզնը, սիրա>սըրտ/սըէրտ, վիզ>վըէզ, տիկ>տըէկ, քիթ>քըթ/քըէթ:

Նախաշեշտ վանկում ի-ն սղվում դառնում է ը, ի՛. դիմաց>դրմաց, դիմանալ>դրմանալ և այլն:

Սասնավոր փոփոխության դեպքեր են.

ի>ը—նախիր>նախըր, պանիր>պանըր.

ի>ու/ու—գիրկ>գուրգ, գիրա>գուրգ, թանիր>թուրուն, կարմիր>կարմուր, լիզել>լուղիլ, փիլոն>փուլումնը, իր>ուր, իրևար>ուրար.

ի>օ—վիլալ>վօլէ, քրտինք>քրոհնօնք.

ի>ա—մոխիր>մօխար, կորիզ>կըռազ, փոխինդ>փօխանդ:

9. Գրաբարյան երկբարբառները այստեղ էլ շրջվել են պարզ ձայնավորներին.

ալ>է—այծ>էծ, լայն>լէն, կայծ>կէծ, ձայն>ձէն/ծէն, կայծակ>կէծակ.

ալ>ա—հայր>հար, մալր>մար, փայտ>փատ. ալ>ա—գալլ>գալլ/կալլ.

ոլ>ա—բոլն>բուն/պուն, գրոլց>գուրոց, լոլս>լուս, կապոլտ<կապալտ.

իւ>ա, ի—արիւն>արուն, հարիւր>հարուն, ձիւն>ձուն/ծուն, ալիւր>ալիր, աղբիւր>ախպիր.

իւ>է—ութիւն>էթուն՝ շատութիւն>շըտէթուն, եղբայրութիւն>ախպէրէթուն.

ե>ն/ե—էգ>էգ/էք, էշ>էշ, դէշ>գէշ/կէշ, խէժ>խէժ, շէն>շէն, ամէն>ամէն, անէծք>անէցք, օրէնք>օրէնք.

է>ն>ըլ—կէս>կըէս, կէտ>կըէտ, սէր>սըէր.

է>ա—անէտ>ուռնատ, գոմէշ>գումաշ/կումաշ, թէ>թա/թէ, խլէզ>խրլազ, մէջ>մաշ, տէր>տար, պարտէզ>պհէզ>պրհազ:

10. Բաղաձայնները, ի տարբերություն ձայնավորների, մեծ փոփոխությունների չեն ենթարկվել, այսպես՝

ա) Քմային ա, օ, ու և վերին բարձրացման ե, ի ձայնավորներից առաջ կամ հետո գ, կ, ք բաղաձայնները քմայնանում են կամ չեն քմայնանում. գինի>գ՛ինի/կ՛ինի, գարուն>գ՛երունք/կ՛երունք, քեղ>ք՛ի, գառն>գ՛ոռնը, Գրիգոր>Գ՛արաք՛ար և այլն:

բ) ՏՆ հնչյունակապակցությունը դասնում է ՆՆ. մատն>մաննը, ոտն>վրննը և այլն:

գ) Բառավերջի գրաբարյան հավելվածական ն-ն սակավաթիվ օրինակներում ընկնում է, իսկ ընդհանրապես պահվում է՝ գաղտնավանկ ր-ի հետ դրա-փոխվելով. ևզն>լէզնը, ձուկն>ձուկնը/ծուկնը, մուկն>մուկնը և այլն:

III. Ձևակազմական-ձևաբանական.

1. Գոյական անունների հոգնակին կազմվում է րբ/էր (հացը—հացեր, բանը/պանը—բաներ, ջիրէր—ջրեր), էրք (ըխչըգէրք—աղջիկներ), աճեք (կընանէնք—կանայք), օճեք (հընգէր—ընկեր, հընգրօնէնք—ընկերներ), օտեք/ըմընօտէնք—ամաններ, տընծօտէնք—տաններ) վերջավորություններով:

2. Հոլովման հարացույցը այսպիսի տեսք ունի.

Սեռ-տր.—է(ն), ու(ն), ան(ը), օ, աց/ցուց

Բացառ.-սեռ.-տր.—անէ/անա

Գործ.-սեռ.-տր. կամ ուղղ.—ավ/ավ

Ներգ.—ըմ(ը)

Ինչպես երևում է, սեռականը հոգառու է. հաց-հացէն, մատանի>մուտանէ-մըտանուն, թոռն>թօռնը-թօռանը, գառն>գժօնը-գժօռանը. բայց՝ հայր>հար-հօր, մայր>մար-մօր, քոյր>ք՛իր-քըվօր(ը), պապուք>պապուք-պապուց, Գրիգորենք>Գ՛ուրք՛ուրաք-աց:

Բացառական հոլովը հարադրական կազմություն ունի, սեռ.-տր. ձևին ավելանում է անէ (Ղարադաղ), անա/անա (Քելվան) մասնիկ:

Ննչավոր և հատկապես անձնանիշ առարկաների դեպքում գործիականը կազմվում է անալ/անալ մասնիկով:

3. Դասական թվականը կազմվում է մինչի ադրբ. HHQH) մասնիկով. էր-կումինջի՝ երկրորդ, իրըքմինջի՝ երրորդ, չօրքմինջի՝ չորրորդ և այլն:

Դերանունները հոկոմվում են այսպես՝

իս՝ ես, իմ, ինձ, ինձտնէ/ընձտնա, ինձանալ/ընձանալ, ինձանըմ

մուք՝ մենք, մըէր/մըր, մըէզ/մըզ, մըզանէ/մըզանա, մըզանալ/մըզանալ, մըզանըմ

դու/տու՝ դու, քու, քի, քիանէ/քիյանա, քիյանալ/քիզանալ. քիյանըմ

դուք/տուք՝ ձիր/ձըր/ձըր/ձըէր, ձըզի/ձըզ/ձըէզ, ձիզանէ/ձիզանա/ձըզանա, ձըզանալ/ձըզանալ, ձիզանըմ/ձըզանըմ

էն՝ նա/այն, ոնդուր, ըզէն, ոնդուրանէ/ընդուրանա, ոնդուրանալ, ընդուրանըմ

ընդուք՝ նրանք, ընդուց, ընդուցանէ/ընդուցանա, ընդուցանալ, ընդուցանըմ

էս՝ սա այս, ուստուր/ըստուր, զէս, ուստուրանէ/ըստուրանա, ուստուրանալ/ըստուրանալ, ուստուրանըմ/ըստուրանըմ

ըստուք՝ սրանք, ըստուց, ըստուցանէ/ըստուցանա, ըստուցանալ, ըստուցանըմ

էդ/էտ՝ դա/այդ, ըտուր/իտուր, ըտուրանէ/իտուրանա, ըտուրանալ, ըտուրանըմ

ըտուք՝ դրանք, ըտուց, ըտուցանէ/ըտուցանա, ըտուցանալ, ըտուցանըմ:

5. Բոլոր երեք խոսվածքախմբերում էլ անկատար դերբայը կազմվում է իո մասնիկով, միայն Ղարադաղի խմբում անհնչյունափոխ (մնալիս, գ՛իրիլիս/գ՛իրիս՝ գրելիս, իսկ Դզմառի և Քելվանի խմբերում՝ լ>յ հնչյունա-

փոխված ձևով (մնայիս, գիրիլս—Դգմառ, մնայիս, կիրիլիս/կիրիս—Քեյվան):

6. Ապառնի դերբայը եռաձև է. խոսվածքների Ղարադադի խումբը հետևյալում է Ղարադադի բարբառին, օրինակ՝ գիրիլական, Քեյվանի խումբը՝ Մեղրի-Կարճեանի բարբառին՝ կիրիլական, իսկ Դգմառի խումբը՝ գրական լեզվին՝ գիրիլու:

7. Խոնարհումը բավականին պարզ տեսք է ստացել. օժանդակ բայը ներկայացնում է միօրինակ ձևեր, ըստ որում անցյալի ձևերը համադրական չեն, նրանք կազմվում են ներկայի ձևերով և ժամանականիշ լինել/եղել > լալ անփոփոխ մասնիկով.

Ներկա-ըմ, ըս, ա/ա, ը/ն/ք, էք՝, ըն—Ղարադադ, ըմ, ըս, ա/ա, ըք, էք՝, ըն—Դգմառ, Կեյվան

Անցյալ—ըմ/ըս/ա/ա/ըք/էք/ըն լալ—Ղարադադ, Քեյվան:

8. Խոսվածքների երեք խմբերում էլ առկա է գերակատար ժամանակը, որով արտահայտվում են վաղակատար և հարակատար ժամանակները, այն կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ձևերով. կրթեցած ըմ=1. կարդացած եմ, 2. կարդացել եմ:

9. Բոլոր խոսվածքներում էլ բուն կատարյալը արտահայտվում է վաղակատարի ձևերով. կրթեցալ ըմ—Ղարադադ, Դգմառ, Քեյվան, գիրալ ըմ—Ղարադադ, Դգմառ, կիրալ ըմ—Քեյվան:

10. Ըղծական ապառնին սովորական (գրական) կազմություն ունի. գիրըմ/կիրըմ, գիրըս/կիրըս, գիրէ/կիրէ, գիրըք/գիրընք/կիրըք, գիրէք՝/կիրէք՝, գիրընք/կիրընք:

Ըղծական անց. ապառնին և պայմանական անց. ապառնին արտահայտվում են միևնույն ձևերով, տարբերությունը խոսքային (կիրառական) է. այն կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի անցյալ ձևերով. գիրիլ/կարթիլ ըմ/ըս/ա... լալ:

11. Պայմանական ապառնին գրականաձև է. կը գիրըմ/գիրըս/գիրէ, և այլն:

12. Հարկադրական ապառնին կազմվում է պետք՝ամ նախադաս եղանակիչով և ըղծական ապառնու ձևերով. պետք՝ամ գիրըմ/կիրըմ:

Հարկադրական անց. ապառնին ձևավորվում է դաբձյալ պետք՝ամ եղանակիչով և ըղծական անց. ապառնու ձևերով. պետք՝ամ գիրիլ/կիրիլ ըմ լալ:

13. Ահա խոնարհման ձևերի ընդհանուր պատկերը.

Սահմ. ներկա-կիրիս/քինիս ըմ, ըս, ա, ըք, էք՝, ըն

անկատար-- կիրիս/քինիս ըմ/ըս/ա/ըք/էք/ըն լալ

ապառնի—կիրիլական/քրնլական ըմ, ըս, ա, ըք, էք, ըն

անց. ապառնի—կիրիլական/քրնլական ըմ/ըս/—/ըք/էք/ըն լալ

գերակատար—կիրած/քիցած ըն, ըմ, ա, ըք, էք, ըն

անց. գերակատար—կիրած/քիցած ըմ/ըս/ա/ըք/էք/ըն լալ

անց. կատարյալ—կիրալ/քիցալ ըմ, ըս, ա, ըք, էք, ըն

Հրամայական—կիրի—կիրէք, քինա—քէցիք

14. Անկանոն բայերի խոնարհման մեկ. նմուշ

Ներկա—կ'այս ըմ, ըս, ա, ըք, էք՝, ըն: Անկատար-- կ'ալս ըմ/ըս/ա/ըք/էք՝/ըն լալ

Ապառնի—կ'իլական ըմ, ըս, ա, ըք, էք, ըն: Անց. ապառնի— կ'իլական ըմ/ըս/—/ըք/էք/ըն լալ

13 «Հանդես», № 1

Գերակատար—յէկած ըմ, ըս, ա, ըք, էք, ըն։ Անց. գերակատար—յէկած ըմ/ըս/—/ըք... էմ/

Անց. հատարլալ—յէկալ ըմ, ըս, ա, ըք, էք, ըն։ Հրամայական—յէկ/յէկըք/արիք։

15. Ժխտական խոնարհումը ձևավորվում է երկու ձևով. գործածական ձևերի դեպքում չ մասնիկ ստանում է օժանդակ բայը, իսկ համադրական ձևերի դեպքում պարզ ձևերը հարադրվում են ետադաս ոչ >վրչ բառ-մասնիկի հետ։

Արգելականը կազմվում է ժխտական գերբայով և ետադաս ափսոսանքի մասնիկներով՝ գիրի սա, գիրի մէք։

КАРАДАГСКИЙ ПОДДИАЛЕКТ

Доктор филол. наук Р. А. БАГРАМЯН

Резюме

На карадагском диалекте армянского языка говорили в большом регионе Карадага в Северном Иране. В начале XIX века количество армянских деревень региона достигало 70-ти, однако в результате многочисленных и непрерывных переселений армянское население деревень ныне практически свелось к нулю. Некоторые армянские диалектологи относили изучаемые говоры к поддиалектам Карабаха, другие считали их поддиалектом карабахского и мегрпского диалектов, третьи считали их группой самостоятельных диалектов. В настоящей статье выделены фонетические и морфологические признаки исследуемых групп говоров, не оставляющие места для блуждающих диалектов и поддиалектов и с очевидностью подтверждающие то, что на территории Карадага существовали три поддиалекта: карадагский, дизмарский и кейванский.